



*Համարը* ՀՕ-15-Ն

*Տիպը* Օրենք

*Սկզբնաղբյուրը* Միասնական կայք 2022.02.07-

2022.02.20 Պաշտոնական

հրապարակման օրը 08.02.2022

*Ընդունող մարմինը* ՀՀ Ազգային ժողով

*Ստորագրող մարմինը* ՀՀ Նախագահի

լիազորությունները կատարող

*Վավերացնող մարմինը*

*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 01.07.2022

*Տեսակը* Հիմնական

*Կարգավիճակը* Գործում է

*Ընդունման վայրը* Երևան

*Ընդունման ամսաթիվը* 18.01.2022

*Ստորագրման ամսաթիվը* 08.02.2022

*Վավերացման ամսաթիվը*

*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**☐ Օանուցում**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա, բացառությամբ 165.10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից և տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

**☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2022 թվականի հունվարի 18-ին

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 165.10-րդ հոդվածով՝

**«Հոդված 165.10. «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելը**

1. «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները ֆիզիկական անձանց կողմից առաջին անգամ խախտելը, բացառությամբ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ այդ օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները ֆիզիկական անձանց կողմից կրկին խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ընդ որում, այդ օրենքի յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտում թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտում համարվում է մեկ խախտում:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 169.8-րդ հոդվածի հինգերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Գործատուն ազատվում է սույն հոդվածով նախատեսված՝ աշխատավարձ չվճարելու համար սահմանված պատասխանատվությունից, եթե աշխատավարձ ստացողը գործատուին օրենսդրությամբ սահմանված կարգով չի ներկայացրել իր հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտը) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը և (կամ) աշխատավարձն անկանխիկ ստանալու համար օրենքով սահմանված ձևերից որևէ մեկը:»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 244.2-րդ հոդվածի 1-ին մասի «165 հոդվածով» բառերը փոխարինել «165-րդ, 165.10-րդ հոդվածներով» բառերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա, բացառությամբ 165.10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից և տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

**Հանրապետության նախագահի  
լիազորությունները կատարող**

**Ա. Սիմոնյան**

2022 թ. փետրվարի 8  
Երևան  
ՀՕ-15-Ն

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 8 փետրվարի 2022 թվական:**